ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԱՐԴԳԵՍ ԱԼԵՔՍԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



Վախճանվեց ականավոր պատմաբան, հայագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր Վարդգես Միքայելյանը:

Վ. Միքայելյանը ծնվել է 1924 թ. դեկտեմբերի 5-ին, Աշոցքի Ղազանչի գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, այնուհետև զորակոչվել է և մասնակցել Հայրենական պատերազմին: Բանակի շարքերում ծառայել է 1942-1947 թթ. և արժանացել մարտական շքանշանների և մեդալների: Ուսանելով Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում և գերազանցությամբ ավարտելով այն՝ Վ. Միքայելյանն ընդունվել է ասպիրանտուրա, ապա պաշտպանել թեկնածուական ատենախոսություն «Գյուղացիության դրությունը և գյուղացիական ելույթները Հայաստանում 1918-1920 թթ.» թեմայով (1955 թ.): 1955-1959 թթ. նա արգասաբեր աշխատանքի շրջան է անցել «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունում, որտեղ և ի հայտ եկան նրա լրագրողական-հրապարակախոսական ակնհայտ շնորհներն ու սկզբունքայնությունը:

Վ. Միքայելյանի՝ որպես խոշոր պատմաբանի կյանքի և գործունեության հետագա ուղին կապվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական միջավայրի հետ: 1960-ական թթ. սկզբից, ընթացք տալով իր գիտական բազմակողմանի հետաքրքրասիրություններին, նա ավելի էր խորացնում իր մասնագիտական փայլուն կարողությունները: 1960-1972 թթ. նա այստեղ աշխատում էր իբրև ավագ գիտաշխատող, իսկ 1972-1987 թթ. իր գիտական հետազոտությունները զուգորդում էր ակադեմիական-խմբագրական աշխատանքներին: Իբրև ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագիր՝ նա անմիջական մասնակցություն է ունեցել ամբողջ հանրապետությունում հասարակագիտական մտքի ձեռքբերումներին և, մասնավորապես, իր ազդեցությունը թողել հայագիտության զարգացման գործընթացների վրա: 1988 թ. սկսած, մինչև իր մահկանացուն կնքելը, Վ. Միքայելյանը գլխավորում էր Պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների պատմության բաժինը, իսկ 1999 թվականից դրան էր համատեղում ակադեմիական հանրահայտ

ու հեղինակավոր հայագիտական հրատարակության՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի պարտականությունը:

Ակադեմիկոս Վ. Միքայելյանի գործունեությունն ընդգրկուն է և բազմակողմանի, որ արդյունավորվել է հիմնահարցերը խորը և ըստ ամենայնի ուսումնասիրելու նրա լայն կարողություններով: Ղրիմի հայկական գաղթօջախին նվիրված նրա պատմագիտական հետազոտական ուղղության շարքի առաջին լուրջ ուսումնասիրությունը՝ «Ղրիմի հայկական գաղթօջախի պատմությունը» մենագրությունը (1964 թ.), Վ. Միքայելյանը ներկայացրեց իբրև դոկտորական ատենախոսություն՝ պաշտպանելով 1965 թ.: Այս թեման Վ. Միքայելյանն ամբողջացրեց «Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1800-1917 թթ.)» (1970 թ.), «Ղրիմի հայկական գաղթօջախի պատմությունը» (ռուս., 1974 թ.) և հանրագումարային «Ղրիմահայոց պատմությունը» (1989 թ.) աշխատությամբ: Այստեղ ամփոփված է Ղրիմի հայ գաղթօջախի վեցհարյուրամյա պատմությունը՝ նրա սկզբնական շրջանից մինչև 1910-ական թթ. վերջերը: Թեմային և սկզբնաղբյուրներին քաջատեղյակ հեղինակը այն լուսաբանել է նաև պատմական այլ համընթաց իրողությունների, կապերի ու հարաբերությունների կտրվածքով: Այս շարքից են նաև «Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով (Լազար Մարկոսի Արծաթագործյան)» աշխատությունը (1979 թ.), որտեղ բացահայտվում և արժեքավորվում են հայազգի նշանավոր ծովակալի խոշոր ներդրումն ու դերը ռուսական ռազմական նավատորմի պատմության ու տարեգրության մեջ, բազմաթիվ հոդվածներ և հրապարակումներ:

Վ. Միքայելյանի աշխատությունները պատմական իրողությունների անաչառ ու ճշմարտացի վերարտադրությունն են: Դեռևս 1978 թ. «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում Վ. Միքայելյանը հանդես եկավ ադրբեջանական պատմագրության ձախուծուռ մի առաջատարի կեղծարարությունները մերկացնող հոդվածով՝ «Զիյա Բունիաթովի հերթական «մտորումների» մասին» (ռուս.): Այնուհետև լույս տեսան Վ. Միքայելյանի հրապարակումները արցախյան հիմնահարցի առթիվ, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Նրա խմբագրությամբ և հմտալի առաջաբանով լույս տեսավ «Լեռնային Ղարաբաղը 1918-1923 թթ.» վերնագրով փաստաթղթերի ու վավերագրերի ժողովածուն (ռուս.), որտեղ գիտական համոզչությամբ և լայն հենքով ներկայացված են նշված ժամանակաշրջանի Արցախի պատմության և հարակից կարևոր հիմնահարցերը լուսաբանող սկզբնաղբյուրները: 1980-ականի վերջերից Վ. Միքայելյանը պարբերական մամուլում հաճախակի հանդես է եկել ոչ միայն Արցախի, նրա հայ բնակչության պատմական ու արդիական իրավունքների հիմնավորումներով, այլև ազգային-քաղաքական մտքի ու կուսակցությունների վերագնահատման համոզիչ և արդիական հարցադրումներով: Նրա խմբագրությամբ 1990-1992 թթ. լույս տեսավ «Գոյամարտ» թերթը, որն իր լուման ունի այն օրերի Հայաստանի ու Արցախի առանցքային խնդիրներով զբաղված հայ մամուլի պատմության մեջ:

Վ. Միքայելյանի գիտական հետազոտությունների մեջ կարևոր նշանակություն ունեն ցեղասպանության սկզբնաղբյուրների հայտնաբերումն ու հրապարակումը:

Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվում նա վերհանել է փաստաթղթերի մի պատկառելի խմբաքանակ: Արխիվային այս նյութերի ժողովածուն Վ. Միքայելյանը հրատարակեց 1995 թ.՝ «Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը Թուրքիայում (1913-1919 թթ.)» վերնագրով: Ցեղասպանության թեմայով ակադեմիկոսը հրապարակել է նաև բազմաթիվ այլ գիտական ու հրապարակախոսական հոդվածներ, տարաբնույթ նյութեր: Հատկապես պետք է առանձնացնել պատմության թուրք նենգափոխների դեմ նրա հրապարակումները, որպիսիք որքան կրքոտ, այնքան էլ ճանաչողական արժեք ունեն:

Վ. Միքայելյանը տասնամյակներ ի վեր կատարում էր դասախոսական աշխատանք՝ հայոց պատմության իր հարուստ իմացությունը տրամադրելով Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ուսանողությանը: Նրա ղեկավարությամբ ու արժեքավոր խորհրդատվությամբ գիտության շեմն են անցել մեկ տասնյակից ավելի գիտաշխատողներ՝ պաշտպանելով թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Կյանքից հեռացավ ականավոր գիտնականը՝ թողնելով խորին ցավ և լուսավոր հետագիծ իր հարազատների, մերձավորների և գործընկերների հուշերում: Մնացին նաև հիշողությունը և այն լուրջ արժեքները, որ ստեղծել է ակադեմիկոս Վ. Ա. Միքայելյանը հայագիտության անդաստանում:

«Լրաբեր հասարակական գիտությունների»
հանդեսի խմբագրակազմ, խմբագրական խորհուրդ